ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

1998 թ. սեպտեմբերի 27-ին, Վարագա Ս. Խաչի տոնի օրը, առավել մարդաշատ էր Օդեսայի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին: Այդ օրը, ձեռամբ Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանի, տեղի ունեցավ Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանի շրջանավարտ Արամ սրկ. Վարդանյանի քահանայական ձեռնադրությունը:

Նախօրեին, հավարտ կիրակամտից երեկոյան ժամերգության, Սրբազան Հայրը կատարեց նորընծայի «Յերեկոյէ կոչումն քահանայութեան» կարգը՝ խարտավիլակությամբ Օդեսայի հայոց Հոգևոր Հովիվ Արժանապատիվ Տ. Աբգար քհն. Գըլըճյանի:

Հաջորդ առավոտյան, Ս. Պատարագի ժամանակ, Արամ սարկավագը, առաջնորդությամբ խարտավիլակ Հոր, ծնրադիր բարձրացավ Ս. Խորան և դառնալով դեպի ժողովուրդը՝ ձեռամբարձ հրաժարվեց աշխարհից՝ կոչվելու համար «... ի սարկաւագութենէ ի քահանայութիւն՝ ըստ վկայութեան անձին իւրոյ եւ ամենայն ժողովրդեան»: Այնուհետև «Աստուածային և երկնային շնորհ» շարականից հետո նորընծան ծնրադիր մոտեցավ Սրբազան Հորը, որը իր ձեռքը դնելով նրա գլխին՝ աղոթաբար արտասանեց. «ես դնեմ զձեռս ի վերայ սորայ, և դուք ամենեքեան աղօթս արարէք, զի արժանի լիցի սա զաստիճան քահանայութեան անարատ պահել առաջի սեղանոյ Տեառն Աստուծոյ»:

Նորընծային զգեստավորելուց հետո, Սրբազան Հայրը Սրբալույս Մյուռոնով օծեց նրա ճակատն ու ձեռքերը՝ անվանակոչելով Տ. Վարդան քահանա:

Հավարտ Ս. Պատարագի ներկա հավատացյալները առաջին աջհամբույրով և բարի մաղթանքներով շնորհավորեցին նորաօծ Տեր Հորը:

Հետայսու Արժանապատիվ Տեր Վարդան քահանա Վարդանյանը ծառայելու է Ուկրաինայի հայոց թեմում, որպես Մակեևկայի նորաշեն Ս. Խաչ եկեղեցու Հոգևոր Հովիվ:

***

Տ. Վարդան քահանա Վարդանյան - Ծնվել է 1970 թ. Երևանում: Միջնակարգ կրթությունն ստանալուց հետո, 1985-ից մինչև 1989 թ., սովորել է Երևանի Մեքենաշինական ուսումնարանում:

1989 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարան: ճեմարանական լրիվ դասընթացն ավարտելուց հետո, 1995 թ. պաշտպանել է «Լվովում պահպանված հայկական ձեռագրերը» թեմայով ավարտաճառը՝ ղեկավարությամբ Տ. Նաթան Ծ. վրդ. Հովհաննիսյանի:

1995 թ. ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի: 1996-98 թթ. ծառայել է Երևանի Ս. Գևորգ եկեղեցում:

1998 թ. սեպտեմբերի 27-ին, ձեռամբ Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանի ձեռնադրվել է քահանա: